



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



PEACE DIALOGUE

Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Խաղաղության երկխոսություն 24

**«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը**  
**«Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք» ծրագրի հաշվետվություն**

«Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք» ծրագիրը իրականացրել է «Խաղաղության երկխոսություն հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,779,800 ՀՀ դրամ, որից 919,800 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի սկզբնական փուլն էր՝ 2015թ. մայիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

***«Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք» ծրագրի հաշվետվություն***

«Քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) իրականացրել է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

***1. Ուսումնասիրվել և վեր են հանվել Վանաձոր համայնքի տրանսպարտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:***

ա) Ծրագրի ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վանաձոր քաղաքում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ընթացիկ վիճակը Վանաձորի քաղաքապետարանը չի ստուգում, վիճակի նկատմամբ վերահսկողություն չի իրականացնում: Նշված անգործությունը կարող է պայմանավորված լինել կոռուպցիոն ռիսկերով:

Մասնավորապես՝ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն գրավոր հարցմամբ դիմել է Վանաձորի քաղաքապետին՝ խնդրելով տրամադրել այն փաստաթղթերի պատճենները, որոնցով հիմնավորվում է Վանաձոր քաղաքում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ընթացիկ վիճակի նկատմամբ քաղաքապետարանի կողմից ընթացիկ ստուգումներ իրականացնելու հանգամանքը:

Գրավոր հարցմանն ի պատասխան Վանաձորի քաղաքապետարանն իր կողմից ստուգումներ իրականացնելը հիմնավորող փաստաթղթեր չի տրամադրել: Դրա փոխարեն նշել է միայն, որ քաղաքապետարանի համապատասխան բաժնի կողմից պարբերաբար շրջայցեր են կատարվում երթուղիներ, որի ընթացքում թերություններ հայտնաբերելիս տվյալ երթուղին սպասարկող կազմակերպությանը բանավոր նախազգուշացվում է կարճ ժամանակահատվածում վերացնելու հայտնաբերված թերությունները կամ առաջարկվում է մրցույթային հանձնաժողովին ներկայացնել տրանսպորտային միջոցի հինը փոխարինելու համար, որի արդյունքում 01.01.2012թ. մինչ օրս փոխարինվել են թվով 28 միկրոավտոբուս՝ ավելի նորերով:

Փաստորեն, չկա որևէ ապացույց այն մասին, որ քաղաքում շահագործվող տրանսպորտային միջոցների ընթացիկ վիճակի նկատմամբ Վանաձորի քաղաքապետարանն իրականացնում է վերահսկողություն: Իսկ Վանաձորի քաղաքապետարանի այն պնդումը, որ իբր իրականացվում են ստուգումներ, որոնք

սակայն որևէ կերպ չեն արձանագրվում, չի բխում վարչարարության սկզբունքներից և տրամաբանությունից, նշված պնդումն անարժանահավատ է:

Ավելին, Վանաձորի քաղաքապետարանի մեկ այլ գրությամբ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ին տրամադրվել է երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցի փոխարինման թույլտրելու գործընթացը կատարելու վերաբերյալ մեկ կազմված գործի օրինակ՝ ընտրված պատահականության սկզբունքով: Նշված գործում առկա փաստաթղթերում չկա այնպիսի փաստաթուղթ, որով հիմնավորվի, որ տրանսպորտային միջոցի փոխարինումը կատարվել է Վանաձորի քաղաքապետարանի վերահսկողության արդյունքում: Փոխարինման գործընթացի իրականացման հիմք է հանդիսացել երթուղին սպասարկող կազմակերպության դիմումը:

Այսպիսով, ձեռք բերված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետևում է, որ Վանաձոր քաղաքում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ընթացիկ վիճակը Վանաձորի քաղաքապետարանը չի ստուգում, վիճակի նկատմամբ վերահսկողություն չի իրականացնում: Նշված անգործությունը կարող է պայմանավորված լինել միայն կոռուպցիոն ռիսկերով: Մասնավորապես, հարց է ծագում, թե առկա վիճակը փոխելու նպատակով ինչու՞ չի իրականացվում վերահսկողություն, ո՞րն է պատճառը, որ Վանաձորի քաղաքապետարանին ձեռնտու է ներքաղաքային տրանսպորտի առկա վիճակը:

Ուղևորափոխադրումների որակի բարելավման համար անհրաժեշտ է կատարել ծախսեր: Բնական է, որ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները խուսափում են այդ ծախսերից և հնարավոր է, որ այդ մեծ ծախսերը չկատարելու համար պայմանավորվածություն են ձեռք բերում վերահսկողությունից խուսափելու համար՝ պայմանավորվածության դիմաց վճարելով շատ ավելի քիչ գումար, քան կծախսվեր մատուցվող ծառայության որակը բարելավելու համար:

**բ) Ծրագրի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս ենթադրել, որ մրցույթի փաթեթում առկա են խախտումներ և բացթողումներ, որոնք թաքցնելու նպատակով Վանաձորի քաղաքապետարանը խուսափում է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Իսկ այդ թերություններն ու բացթողումներն իրենց հերթին պարունակում են կոռուպցիոն ռիսկեր:**

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ն Վանաձորի քաղաքապետին խնդրել է տրամադրել Վանաձոր համայնքի և Վանաձոր քաղաքում իրականացվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև կնքված և ներկայումս գործող բոլոր պայմանագրերի կնքման հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները, մասնավորապես՝ մրցույթի կազմակերպման և անցկացման փաստաթղթեր, մրցույթի արդյունքների ձևակերպմանը վերաբերվող փաստաթղթեր, մրցույթի արդյունքների հիման վրա կայացված որոշումներ և այլն:

Նշված փաստաթղթերի պատճենները Վանաձորի քաղաքապետարանը չի տրամադրել և ՀԿ-ն կրկնակի հարցմամբ դիմել է Վանաձորի քաղաքապետին՝ նույն տեղեկատվությունը ստանալու համար, սակայն կրկնակի հարցման հիման վրա ևս հայցվող փաստաթղթերի պատճենները չեն տրամադրվել:

Վանաձորի քաղաքապետարանի կողմից վերը նշված փաստաթղթերի պատճենները չտրամադրելը կարող է պայմանավորված լինել նշված փաստաթղթերում առկա թերություններով, բացթողումներով: Կամ հնարավոր է, որ պահանջվող փաստաթղթերը պարունակում են տեղեկություններ, որոնք բացահայտում են որոշակի կոռուպցիոն երևույթներ:

Սակայն, «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի գրավոր հարցումներից մեկին ի պատասխան Վանաձորի քաղաքապետարանի կողմից տրամադրվել են երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցի փոխարինման թույլատրելու գործընթացը կատարելու վերաբերյալ մեկ կազմված գործի օրինակ՝ ընտրված պատահականության սկզբունքով: Նշված գործում առկա փաստաթղթերում բացակայում են մի շարք անհրաժեշտ փաստաթղթեր: Օրինակ, բացակայում է փոխարինվող տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճեն, որի բացակայության պարագայում փաստորեն նշված տրանսպորտային միջոցի շահագործումը թույլատրվել է առանց պարզելու տրանսպորտային միջոցի արտադրության տարեթիվը:

Նշված օրինակի հիման վրա կարելի է ենթադրել, որ մրցույթի փաթեթում առկա են նմանատիպ այլ խախտումներ և բացթողումներ, որոնք թաքցնելու նպատակով Վանաձորի քաղաքապետարանը խուսափում է ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Իսկ այդ թերություններն ու բացթողումներն իրենց հերթին պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, քանի որ դրանց առկայությունը քաղաքապետարանի աշխատակիցների կողմից անօրինականություններ թույլ տալու հետևանք է: Իսկ անօրինականություններ թույլ տալու պատճառը որպես կանոն նյութական շահագրգռվածությունն է:

**զ) Վանաձոր համայնքի և Վանաձոր քաղաքում իրականացվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի թերի լինելը, կանխարգելիչ և պատժիչ արդյունավետ մեխանիզմների բացակայությունը թույլ են տալիս ենթադրել, որ այստեղ նույնպես գործ ունենք կոռուպցիոն ռիսկերի հետ:**

Վանաձոր համայնքի և Վանաձոր քաղաքում իրականացվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերում բացակայում են պայմանագիրը խախտելու դեպքերի համար նախատեսված պատասխանատվության միջոցները: Որպես պատասխանատվության միջոց նախատեսված է միայն պայմանագիրը լուծելու պայմանը, սակայն այդ միջոցը

Վանաձորի քաղաքապետարանի կողմից երբևէ չի կիրառվել՝ չնայած, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները պարբերաբար թույլ են տալիս պայմանագրի դրույթների խախտումներ: Ուստի, ակնհայտ է, որ պատասխանատվության այդ միջոցը արդյունավետ չէ:

Ընդ որում, պայմանագրերում պատասխանատվության միջոցների վերաբերյալ դրույթներ նշելը պարտադիր է, ինչը սահմանված է «Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցը կազմակերպող մարմնի և փոխադրումներն իրականացնող կազմակերպության միջև կնքվող պայմանագրի պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 16.10.2008թ. թիվ 1167-Ն որոշմամբ: Նշված որոշմամբ սահմանված պարտադիր պայմաններից որոշները ևս Վանաձորի քաղաքապետարանի կողմից կնքված պայմանագրերում բացակայում են (երթուղու սպասարկման հետ կապված՝ փոխադրողի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարման չափը, վճարման կարգը, երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության ապահովագրության վերաբերյալ դրույթներ և այլն):

***2. Ուսումնասիրվել և վեր են հանվել տեղական և պետական կառույցների դերը համայնքային տրանսպորտի կազմակերպման և համակարգման ոլորտում:***

Ծրագրի ընթացքում ավելի հստակ դարձավ տեղական և պետական մակարդակի այն բոլոր մարմինների դերը, ովքեր ազդեցություն ունեն ոլորտի բարելավման վրա, և ում անգործության պատճառ կարող է հանդիսանալ ոլորտի վատթար վիճակը, մասնավորապես այն, որ Վանաձոր համայնքի և Վանաձոր քաղաքում իրականացվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների վերահսկողություն իրականացնող մարմին է հանդիսանում ՀՀ տրանսպորտային տեսչությունը: Ավելի հստակ է դարձել ոլորտի վրա ազդելու քաղաքապետարանի հնարավոր գործիքակազմը:

Մասնավորապես՝ պարզվել է, որ համայնքի տարածքում իրականացվող ուղևորափոխադրումների որակի վրա քաղաքապետարանի կողմից ազդեցություն ունենալու ավենառեալ եղանակը պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելն է և պայմանագրի պահանջների կատարում պահանջելը: Սակայն Վանաձորի քաղաքապետարանի և քաղաքում ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերն այնքան վատ են մշակված, որ դրանց հիման վրա ուղևորափոխադրումների որակի դրական փոփոխության հասնել կամ թերություն վերացնել գրեթե հնարավոր չէ:

Գտնում ենք, որ պայմանագրերի վատ մշակված լինելը ևս հետևանք է կոռուպցիոն ռիսկերի, քանի որ նման պայմանագիր կնքելը կարող է պայմանավորված լինել կոռուպցիոն համաձայնություններով: Մի կողմից դա ձեռնտու է ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին, քանի որ դրանց

հիման վրա իրենք կարող են շարունակել մատուցել ցածր որակի ծառայություններ, մյուս կողմից դա ձեռնտու է Վանաձորի քաղաքապետարանին, քանի որ ցանկացած թերության դեպքում քաղաքապետարանը կարող է արդարանալ՝ պատճառաբանելով, որ առկա թերությունների դեմ պայքարելու արդյունավետ մեխանիզմներ Վանաձորի քաղաքապետարանը չունի:

**3. Ձևավորվել է հանրային պահանջարկ խնդրի կարգավորման ուղղությամբ:**

Ծրագիրը փորձել է հանրային պահանջարկ ձևավորել խնդրի ուղղությամբ, որի արդյունքում մի շարք քաղաքացիներ հանդես են եկել ոլորտին ուղղված իրենց սեփական առաջարկներով, մասնավորապես՝ ուղևորափոխադրումների ժամերի, ավտոկանգառների և վարորդների հետ կապված:

*Ստորև ներկայացնում ենք ծրագրի ընթացքում տպագրված նյութերը և դրանց դիտողականության ցանկը, որոնք հրապարկվել են «Խաղախության երկխոսություն» ՀԿ-ի՝ [www.peacedialogue.am](http://www.peacedialogue.am) և [www.asparez.am](http://www.asparez.am) անցանց կայքերում:*

Հրապարակված նյութը	Դիտողականությունը	Հավանել են
<a href="#">Կուսումնասիրվեն Վանաձորում տրանսպորտի ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը</a>	382	
<a href="#">«Դուրդ չի գալիս, իջի եսս էն մի մարշուտկեն կգա կնստես»</a>	509	
<a href="#">Նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը Վանաձոր քաղաքի տրանսպորտի վերահսկման ոլորտում</a>	84	15
<a href="#">«Քաղաքապետարանը պետք է լինի շահագործողն ու պատասխանատուն»</a>	50	17
<a href="#">Ովքե՞ր ես ինչպե՞ս են սպասարկում Վանաձորի երթուղիները</a>	318	28
<a href="#">Արձանագրվել է 71 խախտում՝ Վանաձորի կանոնավոր փոխադրում իրականացնողների նկատմամբ</a>	34	1
<a href="#">Քաղաքապետարանի ստեղծած տրանսպորտի աշխատանքը վերահսկող ՄՊԸ-ն 11 տարի անց ղաղարեցրել է գործունեությունը</a>	57	1
<a href="#">«Խաղաղության երկխոսություն»-ը հանդես է եկել Վանաձորի տրանսպորտի ոլորտի բարեփոխմանն ուղղված առաջարկությունների փաթեթով</a>	24	1